ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սոցիալական փաթեթի հաշիվ

1. **Սոցիալական փաթեթի հաշվի ընդհանուր պայմանները.**

- Սոցիալական փաթեթի հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը՝ 5%:
- Սոցիալական փաթեթի հաշվի արժույթը՝ՀՀ դրամ:
- Սոցիալական փաթեթի հաշվի բացում և սպասարկում՝ 0 ՀՀ դրամ,
- Սոցիալական փաթեթի հաշվի համալրումը՝ առանց գումարի և հաճախականության սահմանափակման:
- Սոցիալական փաթեթի հաշվի վերաբերյալ տեղեկանքի տամադրում հայերեն լեզվով (ներառյալ ԱԱՀ)՝ 0 ՀՀ դրամ,
- Սոցիալական փաթեթի շրջանակներում վարկային պարտավորությունների վերաբերյալ և հիփոթեքային վարկերի ընդհանուր պայմանների համապատասխանության վերաբերյալ տեղեկանքների տրամադրում (ներառյալ ԱԱՀ)՝ 0 ՀՀ դրամ,
- Տոկոսների վճարման հաճախականությունը՝ ամենամսյա /տոկոսագումարները յուրաքանչյուր ամիս գումարվում են ավանդի գումարին/:
- Տոկոսների հաշվարկ՝ Բանկը տոկոսների հաշվարկն իրականացնում է հաշվում առկա ավանդի ամբողջ գումարի նկատմամբ, ավանդային պայմանագրի ողջ ժամկետի համար՝ օրական կտրվածքով: Ընդ որում, Բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է սահմանված տոկոսադրույքի առնվազն 1/365 հարաբերակցությամբ:

2. **Այլ պայմաններ և սահմանափակումներ.**

- Հաշվին թույլատրվում է կատարել կանխիկ և անկանխիկ մուտքագրումներ:
- Սոցիալական փաթեթը ներառում է հետևյալ ծառայությունները՝
  1) Հանգստի ապահովում ՀՀ-ում և ԼՂՀ-ում (զբոսաշրջային օպերատորների ցանկը հրապարակված է ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում).
  2) Հիփոթեքային վարկի ամսական վճարի մարում.
  3) Ուսման վճար (ուսումնական հաստատությունների ցանկը հրապարակված է ՀՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում).
  4) Սոցիալական փաթեթի շահառուի առողջության ապահովագրության լրացուցիչ ծառայությունների նվազագույն փաթեթի և (կամ) սոցիալական փաթեթի շահառուի ընտանիքի անդամի առողջության ապահովագրության նվազագույն բազային փաթեթի ձեռքբերում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման համաձայն (ապահովագրկան ընկերությունների ցանկը և ապահովագրության փաթեթների օրինակելի ձևերը հրապարակվում են ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում).
  5) «Հայաստան» Համահայկական հիմնադրամին փոխանցման կատարում:
- Սոցիալական փաթեթի հաշվից գումարը փոխանցվում է միայն ՀՀ Կառավարության 2012թ. Դեկտեմբերի 27 N 1691-Ն որոշմամբ սահմանված և հաստատված չափորոշիչներին համապատասխանող կազմակերպությունների բանկային հաշվին:
- 2018 թվականի Սեպտեմբերի 1-ից սոցիալական փաթեթի ծառայություններից (այդ թվում՝ առողջապահական փաթեթի ծառայությունները) օգտվելու և (կամ) սոցիալական փաթեթի հաշվում առկա դրամական միջոցները կանխիկացնելու համար պարտադիր նախապայման է հանդիսանում նույնականացման քարտի առկայությունը : Նշված պայմանը չի տարածվում օտարերկրյա քաղաքացիների վրա, իսկ փախստականների կարգավիճակ ունեցող՝ սոցիալական փաթեթի շահառուների վրա տարածվում է 2021թ. Փետրվարի 1-ից :
- Սոցիալական փաթեթի հաշվում առկա դրամական միջոցները հնարավոր է կանխիկացնել միայն հետևյալ դեպքերում՝

  1) Հաճախորդի՝ կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու և սոցիալական փաթեթից օգտվելու իրավունքի դադարեցման ժամանակ (երբ դադարում է նրա՝ սոցիալական փաթեթ ստանալու իրավունքը, և նրա սոցիալական փաթեթի հաշվին առնվազն երեք ամիս սոցիալական փաթեթի գումարների փոխանցումներ չեն կատարվել): Այս դեպքում սոցիալական փաթեթի հաշվում առկա դրամական միջոցները կանխիկացնելու համար Հաճախորդը Բանկ է ներկայացնում իր կենսաթոշակի վկայականը, որի պատճենը պահվում է Բանկում.

  2) Հաճախորդի՝ մահվան դեպքում ժառանգի կողմից՝ սոցիալական փաթեթի հաշվում առկա միջոցներն օրենքին համապատասխան ժառանգաբար նրան անցնելու ժամանակ, որի դեպքում ժառանգը Բանկ է ներկայացնում ժառանգության իրավունքի վկայագիր, որի պատճենը պահվում է Բանկում.

  3) «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի հիման վրա, որպես կատարված սոցիալական վճարների փոխհատուցում, սոցիալական փաթեթի հաշվում ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ առկա մնացորդը, բայց ոչ ավելի, քան նախորդ տարվա ընթացքում ստացման ենթակա աշխատավարձից և ձեռնարկատիրական եկամուտներից հաշվարկված ու փոխանցված սոցիալական վճարների չափը: Այս դեպքում Հաճախորդը, յուրաքանչյուր տարվա ավարտից հետո, իր սոցիալական փաթեթի հաշվում առկա համապատասխան չափով դրամական միջոցները կանխիկացնելու համար բանկ է ներկայացնում դիմում նախորդ տարվա ընթացքում իր կողմից ստացման ենթակա աշխատավարձից և ձեռնարկատիրական եկամուտներից հաշվարկված ու փաստացի մասնակիցների ռեեստր վարողին փոխանցված սոցիալական վճարների չափի մասին հարկային մարմնից

տեղեկատվություն ստանալու մասին: Հարկային մարմնից համապատասխան տեղեկատվությունն ստանում է Բանկը՝ առցանց եղանակով կատարված հարցման միջոցով: Բանկը սույն հարցման պատասխանի հիման վրա Հաճախորդի՝ նախորդ տարիների ընթացքում կուտակված սոցիալական փաթեթի գումարները կանխիկ վճարում է Հաճախորդին, բայց ոչ ավելի, քան տեղեկանքում նշված՝ հաշվարկված և փոխանցված սոցիալական վճարների չափը:

- Սոցիալական փաթեթի հաշիվը կարելի է փոխել միայն նոր բյուջետային տարում՝ նախքան սոցիալական փաթեթի ընթացիկ տարվա առաջին գումարի փոխանցումը:
- Սոցիալական փաթեթի հաշիվը փոխելու դեպքում՝ Հաճախորդն իրավունք ունի միակողմանի լուծել Սոցիալական փաթեթի հաշվի բացման և սպասարկման պայմանագիրը, այդ մասին գրավոր տեղեկացնելով Բանկին, որի հիման վրա փակվում է Սոցիալական փաթեթի հաշիվը, հաշվի մնացորդը փոխանցվում է Հաճախորդի ներկայացրած այլ առևտրային բանկում բացված սոցիալական փաթեթի նոր հաշվեհամարին:
- Սոցիալական փաթեթի ծառայությունների համար սոցիալական փաթեթի հաշվից փոխանցումներ կատարվում են Հաճախորդի կողմից (բացառությամբ զինծառայողների, քրեակատարողական ծառայողների, փրկարար ծառայության ծառայողների) առողջապահական փաթեթի պարտադիր կանխարգելիչ բժշկական քննության բաղադրիչից օգտվելու մասին համապատասխան տեղեկանքը Բանկ ներկայացնելու դեպքում:
- «Հայաստան» Համահայկական հիմնադրամին փոխանցում կատարելու դեպքում նույնականացման քարտի և տարեկան կանխարգելիչ բժշկական քննություն անցնելու վերաբերյալ տեղեկանքի նախապայմանները չեն գործում: Գումարը փոխանցվում է Հաճախորդի կողմից Բանկ ներկայացված վճարման հանձնարարագրի հիման վրա: Բանկը մերժում է վճարման հանձնարարագրի կատարումը, եթե սոցիալական փաթեթի հաշվին առկա միջոցները ծանրաբեռնված են սոցփաթեթի շրջանակներում մատուցված ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու պարտավորությամբ:
- Սոցիալական փաթեթի նախատեսված ծառայությունների ակտիվացումը և այլ պայմաններ սահմանված են ««ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Սոցիալական փաթեթի հաշվի բացման և սպասարկման պայմաններով»:
- Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 907 հոդվածի 1-ին կետի, Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են ավանդը Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:
- Ավանդատուն պարտավոր է պահպանել ՀՀ օրենքների և դրանց համապատասխան սահմանված բանկային կանոնների, հաշվի բացման և սպասարկման մասին Բանկում գործող ընթացակարգերի պահանջները:
- Բանկային հաշվում առկա դրամական միջոցները նախատեսված դեպքերում վերադարձվում է այն արժույթով, որով ներդրվել է:
- Տոկոսագումարները վճարվում են հաշվի արժույթով:
- Բանկային հաշվում առկա դրամական միջոցները, դրա մասը և (կամ) դրա վրա հաշվեգրված տոկոսները ստանալիս՝ Հաճախորդը Բանկ է ներկայանում անձը հաստատող կամ փոխարինող փաստաթղթով:
- Սոցիալական փաթեթի հաշվի բացման պայմանագիրը կորցնելու դեպքում, հասցեի փոփոխության, Ավանդատուին նույնացնելու համար այլ անհրաժեշտ փաստաթղթերի կորստի կամ փոփոխության դեպքում, Ավանդատուն պարտավոր է 10 (տասը) բանկային օրվա ընթացքում տեղյակ պահել Բանկին անհրաժեշտ ձևակերպումներ իրականացնելու համար, ընդ որում Ավանդատուն կրում է պատասխանատվություն հիշյալ ժամկետում Բանկին համապատասխան փոփոխությունների մասին չտեղեկացնելու հետևանքների համար:
- Եթե բանկային հաշվում առկա դրամական միջոցների վերադարձի օրը համընկնում է ոչ աշխատանքային կամ հանգստյան օրվա հետ, ապա վերադարձը կատարվում է ոչ աշխատանքային կամ հանգստյան օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ոչ աշխատանքային կամ հանգստյան օրերի համար վճարելով տոկոսներ:
- Պայմանագրի գործողության ընթացքում կատարված փոփոխությունները՝ պայմանագրի պայմանների, կողմերի իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման կամ պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող բանկի ներքին ակտերի փոփոխման դեպքում, որը հանգեցնում է տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման, Բանկը պարտավոր է գրավոր, փոստային կապի միջոցով տեղեկացնել Ավանդատուին՝ նոր պայմանների վերաբերյալ՝ տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման օրվանից առնվազն 15 օր առաջ:
- **Բանկը, հանդիսանալով Ֆիզիկական անձ- ավանդատուի հարկային գործակալ, կատարում է գանձումներ համաձայն ՀՀ և ԼՂՀ հարկային օրենսդրության: Ավանդներից ստացված եկամուտները ենթակա են հարկման ՀՀ տարածքում՝ ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարի 10% (տասը տոկոսի) չափով, ԼՂՀ տարածքում՝ 5% (հինգ տոկոսի) չափով, իսկ օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից՝ 10% (տասը տոկոսի) չափով:**

3. Ավանդատուի իրավունքների պաշտպանությունը՝

- Ավանդային պայմանագրից բխող բողոք առաջանալու դեպքում, Ավանդատուն կարող է պաշտպանել իր խախտված իրավունքները դիմելով Բանկ, անհամաձայնության դեպքում՝ դիմել դատարան կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին:
- Բանկը պարտավոր է քննել Ավանդատուի բողոք-պահանջը, եթե այն ներկայացվել է մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ Ավանդատուն իմացել է կամ կարող էր իմանալ իր իրավունքի խախտման մասին:
- Բանկը պարտավոր է 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Ավանդատուին տալ վերջնական պատասխան: Բանկի պատասխանը Ավանդատուին չբավարարելու դեպքում, վերջինս վեց ամսվա ընթացքում կարող է դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, կամ դիմել դատարան՝ օրենքով սահմանված կարգով: Ֆինանսական համակարգի հաշտարարը իրավունք ունի քննելու այն պահանջները, որոնք ներկայացվել են հաճախորդի կողմից կազմակերպության դեմ, կապված են կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների հետ և պարունակում են 10 000 000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք այլ արժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ:

4. Երաշխավորված ավանդի չափերը՝

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ տարածքում գործող բանկերում ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Երաշխավորվում են ավանդատուի ինչպես դրամային, այնպես էլ արտարժութային ավանդները: Օրենքով սահմանված են երաշխավորված ավանդների հետևյալ չափերը.

- **եթե ավանդատուն բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն հայկական դրամ է.**
- **եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն հայկական դրամ է.**
- **եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային եւ արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը յոթ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասնվեց միլիոն հայկական դրամով.**
- **եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ եւ արտարժութային բանկային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:**

Ավանդատուի՝նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ և ավանդատուի՝նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ:
Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երևան, Խորենացի 15 («Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն), Հեռախոս՝ +37410 583514

5. Տարեկան տոկոսային եկամտաբերություն.
Բանկային հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսային եկամտաբերություն՝ **5.12 %**

6. Տեղեկատվություն տոկոսադրույքների վերաբերյալ.
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ (ՊԱՐԶ) ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ, ԵԹԵ ՁԵՐ ԱՎԱՆԴԻ ԴԻՄԱՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱՆԵՐԴՆԵԻՔ ԱՎԱՆԴԻ ՏԵՍՔՈՎ:

- **Տարեկան պարզ տոկոսադրույք՝ տարեկան կտրվածքով ավանդային պայմանագրով սահմանված տոկոսադրույք, որի հիման վրա բանկը հաշվարկում է ավանդատուին վճարման ենթակա տոկոսագումարները:**
  Տվյալ տեսակի ավանդային պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման բանաձև՝
  ԱԳ * Տ/365*Օր , որտեղ՝
  ԱԳ - ավանդի գումար,
  Տ - Տարեկան պարզ տոկոսադրույք,
  Օր - օրերի քանակ՝ հաշվի առնելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 907 հոդվածի 1-ին կետը, համաձայն որի Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են ավանդը Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:
  Օրինակ՝
  Օրերի քանակ – 365 օր,
  Ավանդի գումար – 72.000 ՀՀ դրամ,
  Տարեկան պարզ տոկոսադրույք – 5%
  72.000 * 0.05/365*364= 3590,13 ՀՀ դրամ
- **Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY) ցույց է տալիս , թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը հաճախորդի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու /կապիտալացման/ արդյունքում:**
  $APY = (1+r/n)^n - 1$, որտեղ՝
  APY – տարեկան տոկոսային եկամտաբերություն,
  r – տարեկան պարզ տոկոսադրույք,
  n – մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է,
  Եթե տոկոսագումարների վճարման հաճախականությունը ամենամսյա է ՝ n=12, ապա
  $APY = (1+0.05/12)^{12} -1$,
  APY = 0.051162*100= 5.12 %
  Եթե տոկոսագումարների վճարման հաճախականությունը ժամկետի վերջում է ՝ n=1, ապա
  $APY = (1+0.05/1)^{1} -1$,
  APY = 0.05*100= 5 %
  Օրինակ՝
  Տվյալ ավանդի պայմանագրով տոկոսների հաշվարկման բանաձև՝ տոկոսների ամենամսյա կապիտալացման կիրառման դեպքում՝
  Օրերի քանակ – 365 օր,
  Ավանդի գումար – 72.000 ՀՀ դրամ,
  Տարեկան տոկոսային եկամտաբերություն – 5.12 %
  72.000 * 0.0512/365*364 = 3676,30 ՀՀ դրամ

7. Այլ տեղեկություններ, Բանկի վերաբերյալ տվյալներ.
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
Հասցե՝ ՀՀ ք.Երևան 0010, Նալբանդյան 48, Հեռ.՝ (+37410) 59-20-20, (+37460) 37-25-00, ֆաքս՝ +37410 59 20 64
Viber՝ (+37494) 11-44-88, WhatsApp՝ (+37494) 11-44-88
Ինտերնետային կայք՝ www.armbusinessbank.am, Էլ. Փոստ՝ info@armbusinessbank.am

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել
Մանրամասների համար կարող եք դիմել ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ գլխամասային գրասենյակ կամ մասնաճյուղեր
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ-ն վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

Գրանցման վկայական՝ թիվ 0176, տրված 10.12.1991թ., Բանկային գործունեության լիցենզիա՝ թիվ 40, տրված 10.12.1991թ.
Ծառայությունների ցանկը, որը Բանկը իրավունք ունի մատուցել՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի Գլուխ 4-ի:
Ամբողջական պայմաններին կարող եք ծանոթանալ հետևյալ http://www.armbusinessbank.am/am/page/bank-soc-acc հղմամբ :